«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/1608

«17» 10 2024 թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ԱԲԳԱՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն, ուսումնասիրելով «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից 14.10.2024թ.-ի զեկուցագրով «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացված հիմքերը, *պարզեցի հետևյալը.*

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի ներկայացրած փաստերը և պահանջը.

Գնահատող հանձնաժողովի նախագահը Պատվիրատուի ղեկավարին ուղղված 14.10.2024թ.-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2024 թվականի սեպտեմբերի 25-ին հայտարարված բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի մասնակցության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես համաձայն գնումների պաշտոնական տեղեկագրում 10.10.2024թ.-ի դրությամբ գործող գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակի «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը փոխկապակցված է «ՊՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, որն իր հերթին 19.05.2023թ.-19.05.2025թ. ժամանակահատվածում ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՊՐՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2023 թվականի մայիսի 19-ից ընդգրկված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, և այն որ «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիշյալ ընթացակարգին հայտ է ներկայացրել «ՊՐՈ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու ժամանակահատվածում, ուստի տվյալ հանգամանքը ինքնաբերաբար

0001927

հանգեցնում է «ՊՐՈ» ՍՊԸ-ի հետ փոխկապակցված անձանց, այդ թվում նաև «Մեդիտեք» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Բացի այդ՝
«Մեդիտեք» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է որ՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ պարբերության համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը

չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Գնման ընթացակարգի հրավերի 2-րդ բաժնի 2.3-րդ կետի համաձայն՝

2.3 Մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Գնման ընթացակարգի հրավերի 8-րդ մասի 8.15-րդ կետի համաձայն՝

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Այսպիսով՝ հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) պարբերությունը, օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, հրավերի 2-րդ բաժնի 2.3-րդ և 8-րդ բաժնի 8.15-րդ կետերը, ինչպես նաև կարգի 121-րդ կետը, 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերությունը և 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ առաջարկում ենք «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. «Մեդիտեք» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է որ՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը փոխկապակցված է «ՊՐՈ» ՍՊ ընկերության հետ, որը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 19.05.2023թ.-19.05.2025թ. ժամանակահատվածում:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից համաձայն հրավերի պահանջների հայտի ապահովում չի ներկայացվել, իսկ որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ ներկայացնելու իրավասություն չի առաջացել, քանի որ վերջինս չի ճանաչվել ընտրված:

3. Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտոր՝ Ա.Ա. Մուրադյանս (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար), ուսումնասիրելով Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Գնման ընթացակարգի հրավերի 2-րդ բաժնի 2.3-րդ կետի համաձայն՝

2.3 Մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Գնման ընթացակարգի հրավերի 8-րդ մասի 8.15-րդ կետի համաձայն՝

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը առաջին տեղ զբաղեցրած կամ ընտրված մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Այսպիսով՝

«Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 25.09.2024թ.-ին հայտարարված Ընթացակարգին ներկայացվել է մասնակցության հայտ:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը թույլ է տվել «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ բաժնի 2.3 կետի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 121-րդ կետի, 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության և 32-րդ կետի 19-րդ ենթակետի խախտում, քանի որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է որ՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Միաժամանակ մասնակից «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը փոխկապակցված է «ՊՐՈ» ՍՊ ընկերության հետ, որը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 19.05.2023թ. – 19.05.2025թ. ժամանակահատվածում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացրած հիմքերը՝ «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, գնահատել բավարար:

2. «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, «Մեդիտեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզիկական անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Մեդիտեք» ՍՊԸ	02643743	Ք. Երևան, Ծ.Իսակովի 22/3	X	-	-	17.10.2024թ. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ»

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐ Ա. ԱՌՈՒՐԱԴՅԱՆ